

Մոբայլ Բանկ

Ծառայություններ

Էյչ-Էս-Բի-Սի Մոբայլ բանկային ծառայությունը կհեշտացնի Ձեր բանկային առօրյա գործարքները՝ հանդիսանալով հաշիվների կառավարման շուրջօրյա, արագ և անվտանգ միջոց: Ինտերնետային բանկային համակարգով հասանելի գործարքների մեծ մասը այժմ հասանելի է նաև Մոբայլ հավելվածի միջոցով: Ստորև ներկայացված է Ինտերնետային և Մոբայլ բանկային ծառայությունների միջոցով հասանելի ծառայությունների համեմատականը.

Ծառայություններ	Ինտերնետ բանկ	Մոբայլ բանկ
Ստուգել հաշիվների մնացորդը և պատմությունը	✓	✓
Կատարել Կրեդիտ քարտի վճարում	✓	✓
Ավելացնել շահառու	✓	
Կատարել փոխանցում	✓	✓
Կատարել ապագա փոխանցումներ և վճարումներ	✓	✓
Բացել ավանդային հաշիվ	✓	✓
Բացել հավելյալ հաշիվ	✓	
Ուղարկել և ստանալ հաղորդագրություններ	✓	✓
Ստեղծել և կառավարել ծանուցումները	✓	

Մոբայլ գաղտնաբառ

Էյչ-Էս-Բի-Սի Մոբայլ բանկային ծառայությունը նախատեսված է խնայելու Ձեր ժամանակը՝ ամենուր հասանելի դարձնելով Ձեր հաշիվների կառավարումը: Այժմ Դուք կարող եք մուտք գործել մոբայլ բանկային համակարգ, նույնիսկ եթե Ձեր անվտանգության սարքը Ձեզ հետ չէ: Ստեղծեք Ձեր մոբայլ գաղտնաբառը ինտերնետային բանկային ծառայության միջոցով և մուտք գործեք մոբայլ բանկային հավելված օգտագործելով այն Ձեր օգտագործողի անունի և հիշվող պատասխանի հետ միասին:

Որոշակի գործարքներ հավելվածում հնարավոր չէ իրականացնել, եթե մուտք եք գործել հավելված տրամադրելով Մոբայլ գաղտնաբառը: Նման դեպքերում շարունակելու համար կպահանջվի մուտքագրել Ձեր անվտանգության սարքով գեներացված ծածկագիրը:

Ստորև աղյուսակում ներկայացված են մոբայլ գաղտնաբառով և անվտանգության սարքով հասանելի գործառույթների ցանկը.

Ծառայություններ	Անվտանգության սարք	Մոբայլ գաղտնաբառ
Մուտք	✔	✔
Կատարել փոխանցումներ սեփական հաշիվների միջև	✔	✔
Կատարել փոխանցումներ ՀՀ-ում, արտերկրում այլ շահառուների, ինչպես նաև HSBC այլ հաշիվների	✔	
Կատարել Կրեդիտ քարտի վճարում	✔	✔
Բացել ավանդային հաշիվ	✔	✔
Ստանալ հաղորդագրություններ	✔	✔
Ուղարկել հաղորդագրություններ	✔	

Թարմացվել է՝ 19/01/2019 16:00